

ԲԱՅՆԵԳԻՆ


ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 շ.
վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀԱՐ
Տարեկ. 13 ֆր
վեցամս. 7 "

Ամերիկա
2 Տղ. 30 սէնդ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Դասուցումներ
մասնաւոր պաշ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPA ZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՅԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՕԳՈՍ. 13 ՀԻՆԳԵԱԲԹԻ 1903

ԹԻԻ 268

ԿԵԱՆՔԸ ՀԱՊԵԾԻՍՏԱՆԻ ՄԷՋ

(Վերջին մաս)

Դ.

Հրաշալի եւ փորձույ Հայ եկեղեցիներ —
Կառավարութիւնը. — Երկրին օրէնք. — Այն ընդ
ակամ. — Բան եւ արխայութիւն. — Ոճրագործ-
ները. — Հայեջական դաստիարակ. — Ոճրագործը
կ'ապաննուի. — Սպաննութիւնները. — Ոսկի օղ եւ
սոսիս իւր. — . . . անդամ բրգները փայտեան
նշան. — Գօմէսի. — Նոր սերունդ. — Խառնածիւ-
ները:

Քաղաքէս ութ օր անդին կայ լին մը որ իր
մէջը գտնուած կղզիին վրայ ունի 12 հատ եկե-
ղեցի մէջ մէջի, ապառաժի մը մէջ փորուած.
տեղացիք կըսեն թէ, ժամանակին քրիստոնէու-
թիւն քարոզելու համար եկած հայերը շինած
են այս եկեղեցին: Այս այն լին է ուր Մեծն
Յովհաննէս իր զօրքերով ջարդուած է:

Հայեջիտանի արդի կայսրն է Մենելիք Բ.
Թագաւորաց Թագաւոր Եթովպիոյ եւ Թագաւոր
Սիօնի: Կառավարական ձեւն է միապետութիւն.
ունի իր փոխանորդը որ է միանգամայն հրամա-
նատար երկրին եւ դատախազ: Մեծ դատաւորն
է «Աֆա Նուկուս» ըսուածը, որ ըսել է «կայսեր
խօսքը»: Վաճառականներու մեծը Եթովպացի

մըն է, սակայն չունի իրաւունք լիազօր դատե-
րու կամ բանտարկելու:

Երկրին օրէնքը Սողոմոնեան է. «ակն ընդ-
ակամ»: Եթէ այսպէս չըլլայ, օրը հաղար ոճիր
կը գործուի, ինչու որ բանտէն չեն վախնար. կը
աւէ որ օրական սնունդնին ստանան բանտին
մէջ եւ արքայութեան մէջ ըլլալ կը կարծեն ինք-
զինքնին:

Եթէ ու է ոճիր մը գործուի, չկայ քաղա-
քական կառավարութիւն ինքնաբերաբար ձեր-
բակալելու համար ոճրագործը, մինչեւ որ սպան-
եալին ազգականները չըողքեն կառավարու-
թեան՝ ան չի ձերբակալեր յանցաւորը: Մեղմա-
յուցիչ պարագաներ չկան եւ երբէք չկատարու-
թեան չառնուիր ու է առարկութիւն բացի ար-
կածէ: Ոճրագործը կը դատուի Մենելիքի մօտ.
ձերակոյտը մահու պատիժ կուտայ եւ Մենելիք
ստքի ելնելով խօսքը կուզգէ սպանեալին ազգա-
կանին, սա բանաձեռով. «Ներէ տղաս, ինչ պէտք
է երկու հօգի մեռնի, մեռնողը մեռած է»:

Սպանեալին ազգականը կը պատասխանէ.

— Տէր արքայ, չեմ ուզեր որ Խորայէլին ա-
րիւնը պարապ տեղը գետինը վազէ, կաղաչեմ
Մենելիքին համար:

Վայրկեան մը լուութիւն կը տիրէ ու դար-
ձեալ կաղաչէ գահին համար. այն ատեն կայսրը
կըսէ.

— Առէք տարէք:

Ոճրագործը կը յանձնուի սպանեալին ազգա-
կանին ու այս վերջինը կ'ապաննէ զայն հրաջանով

շուկային մէջ և կը կախէ մեծ ծառին վրայ ի տես հասարակաց, ապա կը թաղուի:

Մենեւիք կայսրը առաջուց ի վեր համակրութիւն կը ցուցնէ սպիտակներու նկատմամբ և ասանք ուղղակի իր պաշտպանութեան տակ կը գլուխահար:

Եթովպիոյ մէջ առաջին անգամ սեղան դրուած է հանգուցեալ Տիար Տիգրան Մկրտիչեանի, և նէ-կիւսը աթոռ հրամցուցած է անոր նստիլ առաջարկելով, մինչև հիմայ և ոչ մէկ Եւրոպացիի այս տեսակ պատիւ մը եղած է: Իտալական պատերազմէն առաջ սպիտակամորթները շատ պատիւ ունէին, հիմա կարեւորութիւն չունին առաջուան պէս, պատճառն է, առաջին բազմաթիւնին, երկրորդ սպիտակամորթի հետ պատերազմ մղելով յաղթելուն: Իտալացուց յաղթուելը շատ գէշ տպաւորութիւն և շատ քիչ հասցուց Եւրոպացիներու: Վերոյիշեալ Մկրտիչեանը Մենեւիքի թագադրութեան առթիւ Ս. Էջմիածնէն Միւսոն բերած է որով կայսրը օծուած է:

Եթովպիոյ մէջ քաջութիւն կը համարուի, փիղ, առիւծ և ռնգեղջիւր սպաննելը, տեղային լեզուաւ ասոնց կըսուի Կաճա, որ սպաննել ըսել է, ասոնք իրաւունք ունին ոսկի ջուղ գնել ականջնին և առատօրէն օծել կարագ իւզով գլուխնին:

Ամբողջ Եթովպիոյ մէջ մեծ քաջութիւն է մարդ սպաննելը, մարդը սպաննելէ վերջ կը կողոպտեն, շապիկը արիւնը թաթախելով, ռապ կը կտրեն անոր անդամը և ցոյց կուտան զայն իբր քաջութեան նշան:

Եթէ փիղերը մարդ սպաննեն, անոնք ևս կը բրցնեն մարդուն անդամը ու կը ժողովուն իրենց անասնակօն պարը եւ ուրախութիւնը ընելու: Շուններն ալ այսպէս են, երկու շուն կուռած միջոցին մէկը միւսին անդամը կը փրցնէ:

Կիներն ալ էրիկ մարդու հետ կուռած միջոցին կը բռնեն անդամէն ու գետին կը փռեն: Մինչդեռ Եւրոպական երկիրները մեծ ամօթ է ըմբշամարտութեան միջոցին իրարու անդամին նոյն իսկ ամենաթեթեւ կերպով դպչիլ, Կերէի թէ բնութիւնը այս տեսակ ունակութիւններով օժտած է Հապէշիստանի մարդերը, կիները, փիղերը և շունները:

Նոր սերունդ:

Եթովպիոյ մէջ նոր սերունդ մը կայ, անուն չունի և աղգութիւն չի կազմեր, պատճառը պարզ է, սպիտակամորթները ունին մէկէ աւելի անձնական կիներ, ասոնցմէ ծնած զաւակները ոչ ճերմակ կըլլան և ոչ սև, այլ խառնուրդ բան մը: Անոնց մէջ կը գտնուին 25-30 տարեկան երիտասարդներ, որոնք իրենց հօրերնուն լեզուէն բառ մը իսկ չեն գիտեր: զիտցած ու կարգացած լեզունին Հապէշերէն է: Ասոնց մէջ հայերէ ալ սերացածներ կը գտնուին:

Վերջ

Լ. ՊՈՂՈՍԵԱՆ

ԱՉԳԱՅԻՔ

ՊԱՏՐԻԱՐԻՆ ԳՐԱԾ(?) ՆԱԽԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Կասկածողներուն թիւը աւելնալու վրայ է գոյութիւն ունենալու մասին Պօլսոյ Պատրիարքի այն պաշտօնագրոյն, որով հակառահմանադրական նօթէն հրահանգ տուեր է տեղոյս կաղմալուծեալ Թաղ. խորհուրդը. . . կարկտելու: Կըսեն թէ Պատրիարքը պաշտօնի գլուխ անցած ատեն յատենի Ս. Եկեղեցւոյ երդուած ըլլալով սահմանադրապէս ընթանալ, չէր կրնար նայնայէն հրապարակաւ (ստորագրութեամբ) ոտնակոխել իր այս երդումը ու Քաղ. ժողովին ալ զայն վաւերացնել տալ: Ու եթէ իրօք Պատրիարքին կողմէ գրուած էր այդ նամակը, տեղոյս Առաջնորդարանը պարտաւոր էր զայն իր ամբողջութեամբ հրատարակութեան տալ, ժողովուրդին արդար կասկածը իր վրայ չի հրաւիրելու համար: Վերջապէս կըսեն թէ, եթէ այդ նամակը Պատրիարքը գրած է, իբրեւ ուխտագրութեամբ անոր ատեւած ապօրինի հրահանգը չդորձադրելէ զատ, ժողովրդական հանրագրութեամբ բողոքադիւր մը չըկելու էր Պօլսոյ Կեդր. Վարչութեան Խառն ժողովին, իր նախագահին այս ընթացքին դէմ:

Բոլորովին համամիտ ըլլալով ժողովուրդի սոյն արդարացի դիտողութեանցը, իրաւունք կուտանք անոր չեղեալ նկատել այդ կարկատուն ընտրութիւնը:

Սահմանադրութիւնը Ազգինն է, Պատրիարքին սեփականութիւնը չէ որ ազատ ըլլայ զայն ուղածին պէս գործադրելու. հետեւաբար, օրինաւորութեան սահմանին մէջ Ազգը ինք իր ձեռքովը գործադրելու է այդ օրէնքը: Արդ, քանի որ տեղւոյս Թագ. խորհուրդը կազմալուծեալ է, ըստ Սահմանադրութեան՝ նոր ընտրութեան ձեռնարկել պահանջելու ենք ոչ թէ Պատրիարքէն՝ այլ Առաջնորդէն, վասն զի Գաւառներն ու Արտասահմանը իրենց Առաջնորդներու միջոցաւ ընտրողական ժողով կազմելով կը նտրեն իրենց Գաւառական ժողովները ու Թագ. խորհուրդները և զանոնք կը տեղեկագրեն Պատրիարքարան, առ ի վաւերացումն: Մինակ Պօլսաքնակ հայերն են են որ ամեն ատեն իրենց Թագ. խորհուրդները ընտրելու համար Պատրիարքարանին կը գիմեն, որովհետեւ անոնց առաջնորդարանը Պատրիարքարանն է: Գաւառներու մէջ, Առաջնորդական ընտրութիւնն է որ Պատրիարքարանի հրահանգովը ու անոր ցոյց տուած ընտրելեաց ցանկին վերայ կը կը կատարուի. իսկ Պատրիարքարանի հրահանգով գաւառ մը այն ատեն կը նտրէ իր Թագ. խորհուրդը՝ երբ իրեն յատուկ Առաջնորդ կամ Գաւառական ժողովը չունենար: Էհ, փառք Աստուծոյ, մենք Առաջնորդ ունինք, որ միշտ կը յայտարարէ թէ կիւնը խռովեթը տեղն է և պատրաստ է ազգային ժողովներու նախագահելու: Ուրեմն ա՛յ ի՞նչի կ'սպասենք.

ՅԼԱՔ

Սերաստիոյ մէջ Հայերն ունին Հիւանդանոց մը, որ 400 ոսկիի հաշուեցոյց մը ունի. Հիւանդանոցին մէջ կան 40 անկողիններ եւ կը խնամուին տարին 200ի չափ հիւանդներ:

Այս տարի սեպտ. 28ին Էլմիածնայ մէջ պիտի կատարուի հանգիսաւոր միւսուորհնութիւն, այս հանդէսին առթիւ պիտի տօնուի նաեւ Տ.Մկրտիչ կաթողիկոսի քահանայապետական ընտրութեան տասնամեայ տարեդարձը:

Կովկասի մէջ անձնասպան եղած է միլիոնատէր Ա. Մատուրեան: Ազգին կտակիր է երեք ու կէս միլիոն ռուպլի, մէկ ու կէս միլիոնը յատկացուած է Տաճկահայ 16 դպրոցներու, որբանոցներու և արհեստանոցներու: Վեհ. Հայրապետին տրամադրութեան տակ թողեր է մէկուկէս միլիոն ռուպլի: Գ. Պօլսոյ Պատրիարքութեան 300,000 ռուպլի: Կտակաւորաբար կարգուած է Պ. Կարապետ եղեանց:

Շուշեցիք թրքահայ կարօտեալներուն ի նըպաստ 268 ռուպլի հանգանակած են:

Ծ Ի Ծ Ա Ղ

Մրճարանի մը մէջ.

—Այս շաբթուան եկած թերթերուն մէջ ի՞նչ նորութիւն կար.

—Ուռսահայ թերթերը գրած են եղեր որ Թուրք-Պարսկական սահմանագլխին վրայ, տաճկահայ գաղթականները յարձակում կրէր են այդ կողմերու կէս-վայրենի կէս-անկախ քիւրտ ձեղերէն որոնք զանոնք կողոպտեր են, ունեցածնին չունեցածնին տանելով:

—Եղբայր, հիմայ սա մեր պ. յեղափոխականները ի՞նչու գոնէ այդ քիւրտերը արգելելու համար պէտք եղածը չեն ըներ.

—Ի՞նչ կըսես աղբար, մարդիկը գլուխնին քերելու ժամանակ չունին, որ մէկը ընեն,

—Ի՞նչ կընեն կոր քի.

—Ձերար... կ'սպանեն կոր.

Երկու բարեկամք

—Գէորգ աղա, Պօսթընի հայաթերթերը կը յայտարարեն թէ Ս. Գիւլեանը զարնուած է. Պօսթընէ 30 օրուան ճամբայ հեռու վառնա քաղաքին մէջ հրատարակուած Իրաւունք թերթն ալ կը յայտարարէ թէ սուտ է, ատ մարդը զարնուած չէ. ասոնց ո՞րին հաւտալու է.

—Ինձի հարցունես նէ՛ վերջինին հաւտալու է.

—Ինչպէս

—Որովհետեւ Ս. Գիւլեանի զարնուած գիշերը Իրաւունքի խմբագիրը զայն ողջ առողջ չի զարնուած տեսած է... Երազին մէջ.



ԿՍՄԻԹ

... Խմբագիր,

Կիրակի օրը մայրիկիս հետ եկեղեցի գացեր էինք, մեր մօտը կեցող երկու տիկիններու հետեւալ կերպով աղօթելը չափազանց ծիծաղս շարժած ըլլալուն, զայն նոյնութեամբ Ձեզ կը զրկեմ, քանզրեւոյ ոք եթէ յարմար կը դատէք՝ հաճիք «Հայելի»ի միջոցաւ հրատարակել. Յարգարօք

Օրիորդ...

ԵՐԿՈՒ ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻՔ

—Օղորմեա՛ ինձ ասված ըս մեծի օղորմութեան քուրուկ, սա առջևնիս տիրէլի պէս կայնող մաշի պլուզալըն ո՞վ է.

—Եւ էրկիր պագանեմ քեզ, չի ճանչցա՞ր, Խաբըշխենց հարսն է:

—Քաւեա՛ զանօրէնութիւնս իմ, շաբխային թիւը ըռահաթ ճինէ մը (եզիպտական ոսկի) կընէ.

—Արարիչ հիրեշտակաց և մառգկան՝ ան չի չինէ տէ ո՞վ պիտի չինէ.

—Հոգի՛, կիթ կիտէ ալ կը կենճնայ կոր, առաւել լուա զիս անօրէնութենէ իմմէ.

—Եւ ողորմեա քո արարածոց՝ անոր խամսը զուծիւնը դուն ալ ունենաս նէ՛ ֆըչի կը տառնաս:

—Իմմէ և ի մեղս ծնաւ զիս, մաղբրուդ բեռնէմը քանի՞ չինել տուիր.

—Էրկու ըռեալի.

—Մայր իմ, դու տէր զճշմարտութիւն, քառա գասին էտեը նոր էկող կեցող իբէք թէլի ճահիւր ո՞վ է.

—Եւ ինձ բազմամեղիս՝ պօյը սիրեմ, էֆտիկիս արեւնին լայըխ լօխմա մընէ ամա՛ ով ըլլալը չիտեմ:

—Քուրուկ՝ բէք ալ էրկան կը պունեն կոր. զանօրէնութիւնս իմ ես ինձէն կիտէմ:

—Հայր էրկնաոր ասված ճշմարիտանանկ է քաջլամամը ունիս վրան տնելիք, չօրպա՞ մը պիտի ետփես.

—Մեղք իմ առաջի իմ են ամենայն ժամ, աստաւարի պէս էրկան ալելուիա կընեն կոր. պառաւազին կէսին էրթամ տէ չօրպաս վրայ դնեմ.

—Մաքեա՛ զիս վերստին ասվածային ըրով

քով, ես լցաք ի բառութենէն առաջ չեմ էլլար քի Հազորդ առնողներուն հագածը աղւոր մը տեսնամ.

—Դու Տէր զճշմարտութիւն. չիմախիք մնաս բարով, բէք մէռաք եղաւ ինձի, էրթամ գաւիթ՝ ճիին պիտի հարցնեմ տա տէլիսանլըին ով ըլլալը:

Այս ըսելէ ետքը բարեպաշտուհի(°)ներէն մին մեկնելով սոյն կատակիրգութիւն ալ վերջացաւ:

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Հագուսի վրայ քափուած ձեք կամ ուրիշ քսասկ իւղը մաքրել,

Եթէ անուշադրութեամբ զգեստի վրայ իւղ թափի, ալիւրը տաքցուցէք, բայց լաւ տաքցուցէք, և բաւականով տարածեցէք զայն հագուստի այն մասին վրայ: Մէկ քանի անգամ կրկնեցէք այս փորձը եւ յետոյ խոշանակով մաքրեցէք, տաք ալիւրը իւղը կկը ծծէ:

ՆԿԱՐՅԱՆՈՒԿ



—Յորենի շտեմարանէն մուկ մը դուրս ցատկեց, արդեօք ո՞ւր փախաւ:

«Հայելի»ն ձեռքէ կը ծախուի նաեւ Սարաֆիյէ Տիար Աչոսի փալաքանի խանութը. իսկ Վառնա Տիար Ա. Զարպհանէլեանի գրատունը.

Ի Ն Ա Ն Մ Ա

Թուրքիա տա իսլահաթ իճրա օլունապիլիր, տէրլէրսէ՝ ինանմա՝.

Պու կիտիչլէ Ալէքսանտրիա քիլիսէսի Յահմանադրութիւն ահկեամըյլա ինթիսապ օլունմուշ հիզամըլ պիրթաղ խորհուրդ կէօրէպիլէճէք տիր տէրլէրսէ՝ ինանմա՝.

Առաջնորդումուզ միլլէթ իշլէրինի էյրի պիւյրիւ վէ չարբըզ կէօրմէյէճէք տիր տէրլէրսէ ինանմա՝.

Պու սէնէ մէքթէպիմիլին հալի չօք էյի իտի տէյուպ էօթէտէ պէրիտէ շարլաթանըզ իտէն շէհրիմիլ մէքթէպ անօրէնինին սէօլլէրինէ ինանմա՝.

Գաբաշըզ վէ տօլանտըրըճըլըզ տիւնեատան գալգաճադ տըր տէրլէրսէ՝ ինանմա՝.

Գատընլար՝ էվլէրի երգըճը սիւստէն տիւլէնտէն օսանաճաղար տէրլէրսէ՝ ինանմա՝.

Տօսթլուգ տէնիլէն շէյ տէվամի օլաճադ տէրլէրսէ՝ ինանմա՝.

ԱԿԵԱՀ

Բոժոժիկ.—Օթլագըլըզլա կաղէթա օդուեանլար պիր կիւն ութանաճաղար, տէրլէրսէ՝ սէնտէ պունա հիշ ինանմա՝.



Բէտէրին պիրի՝ քէնտի էվլատընըն մէքթէպտէ պիր շէյ էօյրէնէմէտիլինտէն տօլայը միւթէէսիւֆ օլարադ, պիր ահպաղընա տէրլէշմիշ.

—Ահ, էյի պիլիրիմ քի՝ պու չօճուգ եարըն պէօյիւրսէ՝ հիշ պիր իշէ եարամայաճադ.

Ահպապը.—Մէրադ իթմէյինիլ, պիրատէր, սիլին երինիլի թութաճադ տըր.

Կէճէ վաղթը, Բիթ—բիթ աղա՝ էվին իշէրիսինտէ պիր աեադ սէսի ալըպ՝ էհլինի ուեանտըրըր.

—Փուլիկ, տըշարը սօֆայա չըգ պիր տէֆա, զաննըմ պիրիսի կէզլինիօր.

—Բիթբիթ աղա, պիլիրսին քի պէն իքի ճանլըբըմ, նաճըլ տիշարը չըգայըմ, գօրգարըմ.

—Է ա՛յ օղուլ, սէն քի իքի ճանլը իքէն գօրգաեօրսըն, պէն պիր ճանլը օլարադ նաճըլ գօրգարըմ.

Թօհաֆլարտան պիրիսի պիր սիյիր մահալինէ կիտէր պաղար քի՝ իւշ պէշ քիշի օթուրմուշ էյլէնիեօրլար, պու տա կիտէր եանլաբընա թէքլիֆսիղճէ օթուրուր. Շիմտի պունլար պու հէրիֆի պաշլարընտան նաճըլ սափսընլար, պաշլարլար կէօրիւշմէյէ վէ իշլէրինտէն պիրիսի տէր քի.—Է՛ արգատուշլար, մատէմ քիպիզ՝ եալընըզ պիզ պիզէ օլարադ սէքիզ կիւն պունտա գալաճաղըզ, շու հալտէ սէքիզ կիւնլիւք եէմէք պէնիմ իւսթիւմէ օլսուն.

—Է՛, սէքիզ կիւնլիւք իշրէթ տէ պէնիմ իւսթիւմէ օլսուն.

—Չալիլտա պէնիմ իւսթիւմէ օլսուն.

—Ուֆադ թէֆէք մէսարիֆաթ տա պէնիմ իւսթիւմէ օլսուն.

Շիմտի, քէնտի կէլէն միսաֆիրլէրինի սափմադ իսթէյօրլար եա՛, օնա տա սօրարլար. «Է՛, պիրատէր. սէօյլէ պազալըմ. սէնին իւսթիւմէնէ՛ օլսուն.

—Նէ՛ օլաճադ. էկէր սէքիզ կիւն պուրատան պիր եէլէ կիտէրսէմ՝ Ալլահըն պէլաօրտա պէնիմ իւսթիւմէ օլուվէրսին վէսսէլամ.— Եէվապընը վէրիւր.

Փիլիկ աղա կիճէնին եարըսընտա ուեանըպ, պէօյիւք օղունա սէսլէր.

—Մօ Գառնիկ, գալգ պունա պիր սու վէր.

—Աղապա, կէճէ վաղթը սու իշմէք էյի տէյիլ տիր, տալադ օլսըսըն, տէյուպ օ պիր թաթաթա տէօնէր.

Քիւշիւք օղուլ.—Վա՛յ թէնպէլ վա՛յ. հա՛յ թիկ. գալգ հէմ սէն ի՛շ հէմ պանա տա վէր.

ՅԵՐԱՅԻԻ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Սարաֆիյէ

Երեքշաբթի առտու, Պողիկտոս աղան՝ կնոջը մէկ քանի կտոր աղամանները մաքրել տալու համար: Ղանոնք տարաւ յոնձնեց խտալացի . . . շանթէօղի մը:

Պրազիլիա

Մէկ քանի վարժուհիներ՝ խառնաւ սեօհպէթի մէջ որոշեցին իրարու համար . . . խղափր-գութիւն ընել:

Բալիֆօրնիա

Համեստուհի ուսուցչուհի մը իրեն եղած հարցման մը պատասխանելով ըսաւ թէ, անպատճառ այս տարուան պաշտօնավարութեան միջոցին ի գլխիս պիտի հանէ անցեալ տարուէն սկսած . . . ախրաբանութիւնը:

Ռամլէ

Կայարանին մէջ երիտասարդ պարոն մը տաքիքոտ կնկան մը քծնած միջոցին՝ ընկերներէն մէկը վրայ հասնելով ըսաւ, — Օ, այդ ինչ է բաքեկամ, կը շնորհաւորեմ քեզ:

— Բան մը չէ, պատասխանեց սիրահար պարոնը կարմրելով, հին ազգաց պատմութիւնը կը թղթատէի:

Հելվան

Հոս քաւարան մը հաստատուեցաւ ուր ժամանակ մը պիտի առանձնանան մէկ քանի պարկեշտուհիք: Վասն քաւութեան ծովացեալ մեղաց իւրոց: Առաջին պարկեշտուհին հոս հասաւ երէկ գիշեր վերջին շոգեկառքով:

Կենդանաբանութեան Դասատուն

— Պարոններ, գիշատիչ թռչուններուն անունները սովբեցանք, կարգը եկաւ մարդուս օգտակար ծառայութիւններ մատուցանող թռչունները անանջնալ:

Անհամբեր ուսանող մը—Ատիկայ ես արդէն գիտեմ, միւսիւ:

— Ի՞նչու մի . . . ուրեմն ըսէ տեսնեմ, օգտակար հանգիսացող թռչունները որո՞նք են,

— Ի՞նչպապ ըլլալով՝ սեղանը բերուածներուն առջեւն ան օգտակար են:

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

«Հայերի»ի սպարանին մէջ դիւրամասցելի գնով կը սպագրուին առեւտրական տներու համար առեւ յեղուէ՝ Բարիզեան վերջին դրութեամբ հետաքրքրաշարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոփոխիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ աշցեմօս, հասցէտօմ, հարսանեկան հրաշրագիր, մահագր, նամակագրիւ, պաշարան, տոմարակ. եւն. Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւնք ալ փութով կը կատարուին:

Ա. Զ. Դ.

Հետեւեալ գիրքերը կը ծախուին Տիար Բարսեղ Թեղաշեանի փով:

	որշ. որշ
Փիլիկ Աղբոր Հարսնիքը	1,5 " "
Ա. յիւնի Լեթայիք, հայաստ եւ քրքաքառ գուարձալիքներ	4 " "
Դսպան Դօմա, գօմէքի	20 փոյ.
Մահճուպիյէթիւ Միսկաւարը	20 "

ԶՈՒԼԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ՌԱՓԱԷԼԵԱՆ

Թիւ 5 Շարա Ապտիւլ-ազիզ, Գահիրէ

Կը ձուլէ առեւ յեղուէ սպագրական տներ, ծաղիկ, անթերիլի եւ կառանքիւ:

Առաջին օրէն իրեն նշանաբան ընտրած է ողորմութիւն եւ արագութիւն: Իրեն դիմողները միշտ գոն մնացած են:

ԱՇՈՏ ՓԱԼԱՆԱՆ

Տպագրական առեւ յեղուէ գործերու կաշուանիս, փորագրիչ, թէ տաախի եւ թէ պրիմիւս վրայ, կը պատրաստուին նաեւ վաճառականական կնիքներ՝ մեծադէ եւ փառլոյն:

Աղեփաւերիս, Ծրանփ փողոց թիւ 22